



ԽՄ ԲԱԳՐԱԿԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ՀԱՅՐԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԻ ԵՎ ՆՐԱ ԹԵՄԵՐԸ



այրենասւր պատմիշ Սոսելի Դավթիծեցու արտահայտած այն միտքը, թե «Եւ վերայ աղոյն և էջմիածնի ամենայն ազգի Հայոց կապիալ կան», հայ հավատացյալ ժողովրդի սրբագին ու խոր հավատին է եղել դարեւ շարունակ: Հայաստանյայց Սոսելական Նուրբ Եկեղեցին Լուսավորչի ամուսնով և էջմիածնի գաղափարով է ապրել և ստեղծագործել իր գոյուրյան առաջին իսկ օրերից:

1.600 տարի շարունակ այդ զգացմունքը վառ է եղել հայ հավատացյալ ժողովրդի հոգում: Մեր ժողովրդի պատմական անցյալում շիան հայ սրտերն իրար միացնող ուրիշ այնպիսի ժողովրդականացած սրբություններ, բայց լուսավորիչն է ու էջմիածնին: Այս երկու պայծառ անունները խորհրդակշան են հանդիսացել հայ ժողովրդի ազգային-հոգեվոր միասնության, կրոնական ինքնազիտակցության, ազգային-եկեղեցական արժանապատկության:

Լուսավորիչն ու էջմիածնին իշխան են մեր Եկեղեցական ողջ մատենագրության վրա: «Մի է հայրն մեր, մի և միակրօն ազգն Հայոց», — գրու է Հովհանն Եղիշեցին: Լուսավորչի Աջի զրությունն է, որ էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության Արքոփ հետ միացնում է բոլոր հայերին՝ Եկեղեցական մեր բոլոր թեմերին, կազմելով նոզեր մի սպա՝ «մի և միակրօն»:

«Ան ես և մատենան իմ, զոր ետ ինձ Ասուած»:

Լուսավորչի Աջն ու էջմիածնի կարողիկեն ներշնչումի, կորովի, նույսի ու հաղթանակի

ահապատ ազբյուր են հանդիսացել մեր ժողովրդի համար ամեն անզամ, երբ օտար փորձել է ձեռք բարձրացնել մեր հայրենի սրբությունների, մեր երկրի պատության վրա, ամեն անզամ, երբ մեր հանճառել, աշխատավոր ժողովություր, մեծ սիրապությամբ, հոյակապ պատմական կորպներ, զիր ու գրականություն, գեղարվեստ ու կուտառա է զարգացրել: Ո՞չ մի երիտոնիս ժողովրդի կյանքում ու պատմության մեջ Եկեղեցին այնքան բախտորոշ ու պատմական դեր չի խաղացել, որքան Հայաստանյայց Սոսելական Եկեղեցին հայ ժողովրդի կյանքում, երա պատմության ողջ ընթացքում:

Էջմիածնին գարավոր ու պատմական կենտրոնն է Հայաստանյայց Սոսելական Եկեղեցու: Հայաստանյայց Սոսելական Եկեղեցու գերազույն իշխանությունը ներկայացնում է Ամենայն Հայոց Հայրապետությունը, իր նախամեծար Արքատյան համազգային Մայր Արքոն:

Մեծ և պատասխանառու է եղել Ամենայն Հայոց Հայրապետության և նրան ենթակարեմերի դերը հայ ժողովրդի կյանքում: Հայ պետականության բայցայնմից և անկումից հետո, Հայաստանյայց Եկեղեցին, իր հոգեվոր մեծ առաքելությունից բացի, եղել է այն միակ հանգըլանը, խաղաղության հավանագիտուր, որին ապավիճել է մեր ժողովություրը, նրանով խրախուսիել, ապրել, պայշտարել:

Հայաստանյայց Եկեղեցին չի սահմանափակվել բացառապես իր նոզեր կոչման ասպարեզով: Նա իրազործել է ազգային կյանքի զանազան գործունեություններ, մի-

շամտել է ժողովրդի հասարակական, դաստիարակչական, բարեգործական և կուլտուրական խնդիրներին, մասնակցել է հայ ազգագրական շարժումներին և այլն: Ամենայն Հայոց Հայրապետը ո՞չ միայն կրոնավետ է հանդիսացել լայն իմաստով առաջ, այլև ազգապետ:

Հայ ժողովրդը, բաղաքական անկախությունը վերապահենուց հետո, երբ ունեցավ իր պետականուրյունը՝ հանձին Սովետական Հայաստանի բարեկամ կառավարույթյան, Ամենայն Հայոց Հայրապետուրյունն անցյալի ժամանակուրյունների բելարրաներով իր վրա վերցրած բաղաքական, կուլտուրական և հասարակական այլևայլ պարտականությունները տվեց իր ինկական տիրող՝ հայրենի բաղաքական իշխանության: Այդ պարտականությունների բնոնարափումից հետո, սակայն, Ամենայն Հայոց Հայրապետուրյունը ամեններն չի կաղապարվել և չի կաղապարվի կրոնական նեղ շրջանակներում: Այսպես, նա չի կարող անտարբեր գտնվել հայ ժողովրդի Արևմտյան Հայաստանի հողերի համար եղած պահանջների նկատմամբ, նա չի կարող զբաղվել արտասահմանում ցրված մոռ մեկ ու կես միլիոն հայության նակատագրով և բոլոր տալ, որ հայրենասեր այդ հատակածը ծովման ենթարկվի և ոչնչանա, նա չի կարող բոլոր տալ, որ արտասահմանի հայ համայնքները խաղալիք դառնան բաղաքական անպատճախանառու կուսակցությունների ձեռքում և ազգային նոր ողբերգության դուռ բաց անեն:

Այսօր Հայաստանյաց Առաքելական եկեղեցին, Ամենայն Հայոց Հայրապետուրյան գլխավորությամբ և բնեմերի ամենաշական գործակցությամբ, ավելի մեծ առաքելություն ունի կատարելիք հայ ժողովրդի կյանքում, բան երբեք:

Ամենայն Հայոց Հայրապետուրյունն ունաւ եկեղեցական բնեմերը կազմում են մի օրգանական անքակտելի միասնություն: «Մասն արմատով է ծառ, տուեր հիմամբ է տուն»: Գտան է եղել և տխուր նակատագիրը այն բնեմերի, որոնք կարվել են էջմիածնից և առնավետ կրտել հայ ժողովրդի համար: Լինահայոց տխուր օրինակը մեր առջևն է:

Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցին, Ամենայն Հայոց Հայրապետուրյան գլխավորությամբ և ամենօրյա հսկողությամբ, պաշտպան է կանգնել հայ ժողովրդի արժեքներին և իրավունքներին:

Էջմիածնի բնեմերը, մեծ ու փոքր համայնքներով, ցրված են ողջ Սփյունքում: Այդ համայնքներից յուրաքանչյուրը, նեռավորության, օտար ազդեցությունների և այլ այլասերող ազդակների պատճառով, կարող է տիրառանալ և խսդան կրոշել հայության

համար: Հայրենի եկեղեց հետու, էջմիածնի ամենօրյա ղեկավարույթունից հեռու, երանե աստիճանաբար կարող են խորքանալ, մոռանալ հայրենի պահպեները, կորցնել ազգային ոգին: Օտար եկեղեց, օտարի մշակույթը այլասերում են հայ զորություններին, բոլույթում երանեց: Եթե կա մի ուժ, որ ժամանակավորապես պահպանում է հայ ժողովրդի այդ բեկորները, այդ Հայրենիքի զաղափարն է, իսկ դրա շեշտողն ու պահպանողը հանդիսանում է մեր ազգային եկեղեցին մեր բեմերում: Մեր եկեղեցականները և մտավարականները համարձակ պիտի հանդիս զան հայրենասիրական իրենց ելույթներով: Ըստ որում, Հայրենիքի ժաման խոսելիս պետք չեն մանվածապատ և բնդիանուր խոսեր, այլ պետք է շեշտափած և շեմ խոսել Սովետական մեր ծաղկող Հայաստանի մասին, որի 32 տարիները մեր պատմության ոսկեդարն են կազմում: Պիտի միշտ հիշել հայրենասեր Հայրապետի դասկան հետեւյալ խոսերը. «Հայը բացի Սովետական Հայաստանից չունի այլ Հայրենիք»: Հայը Հայաստանից դուրս չունի այլ հաստատուն կովան, բայց երե Մայր Հայրենիքը, Հայ Եկեղեցին և երան գլխավորող Ամենայն Հայոց Հայրապետուրյունը՝ Ա. Էջմիածնի Հայրապետական Արքունիք:

Ապրում ենք միջազգային բաղաքական բարդ ու լարված իրադրության մեջ: Առանձնապես փափուկ և խոռվանույզ ժամանակներումն են ապրում մեր արտասահմանյան բնեմերը: Օերը ծառ են և հզի բաղաքական ամակենակալներով: Հարկ է հանդիս բներել հոգու արիություն, սկզբունքայնություն, բաղաքական զգունություն, քիչառնեական արքամտառություն, շրահայեցություն: Թեմերի պարտականությունն է վառ պահել հայ հավատացյալների սրտում հայրենասիրույթյան էջմիածնասիրույթյան բոցավառ զգացմունքը: Ամեն մի Եկեղեցական բե աշխանական անհան պարտավոր է միշտ հիշել Ամենայն Հայոց հայրենասեր Հայրապետի խրաները. «Մայր Արքոր հավատացած է, որ անցյալի դառն փորձություններից իմաստացած հայ ժողովրդը, բունավոր ու պետի համար երբեք անուղղի չի հանի իր ազգային-կրոնական ավագության սրբազն իրավունքը»:

Արտասահմանի մեր բնեմերի խնդիրն է մերկացնել իրենց խնամքին հանձնված հայ ժողովրդի ազգային-Եկեղեցական սրբազն միասնության, ազգային-կրոնական դրավոր ուխտի ու հոգերու դաշինքի հիմքերը փորող այլասերվածներին:

Այսօր ավելի բան մի այլ ժամանակ, պետք է հստակ ու վեօնական հնչի Հայա-

տանյայց Առաքելական Եկեղեցու միասնական ձայնը, հայ ժողովրդի, Հայ Եկեղեցու ներքին ու արտաքին բշխամիների դեմ, հօգուտ հայ ժողովրդի կենսական շահերին։ Այսօր ավելի բան մի այլ ժամանակ պետք է կազմակերպված դրսերքի Հայաստան-ի այց Առաքելական Եկեղեցու, երա թեմերի կամքի, գործողուրունների, կարգապահության միասնորյունների։ Մեր Թեմերի ՀԱՄԱՐ ԶԱՅՆ ԵՎ ԶԵՆ ԿԱՐՈՂ ԼԻՍԵԼ ԱՎԵԼԻ ԲԱՐՁՐ ՇԱՀԵՐ, ՔԱՆ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ, ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ ԸՆԴՀԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՀԵՐԸ։ Այս պահանջը թելաղրված է հայ ժողովրդի և Եկեղեցու կենսական շահերով։

Մեր թեմերը, իրենց քեմակալ առաջնորդներով, իրենց քեմական խորհություններով, հավատացյալների բազմությամբ, հայրենասեր են և հնագանդ զավակները Մայր Արքունի. Երանց սերն ու հարգանքը էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության հանդեպ՝ առկեղծ և որդիական են:

Սակայն, դժբախտաբար այսօր է, կան որոշ բերություններ, եկեղեցական կարգապահության որոշ խախտումներ: Կան նաև եկեղեցականներ, որոնք պատշաճ բծախսդրություն չեն ցուցաբերում էջմիածնի Ամենայն Հայոց Հայրապետության գերազանց դիրքը իր բարձրության վրա պահելու համար:

Այսպես, օրինակ, Հյուսիսային Ամերիկա-
յի հայոց թեմի առաջնորդ Տ. Տիրան արք-
և պատվագան Ներսոյանը, ամերիկանայ ազ-
գային եկեղեցական սահմանադրության մեջ
փոփոխություններ մտցնելով, առաջարկում
է՝ «Հայրապետության գերազույց իշխանու-
թյան ներքո» բառերի փոխարեն մտցնել
«Հայրապետական նորմեր և եկեղեցական-
կրոնական իշխանության ներքո» բառերը:
Այս առաջարկով, Ամերիկայի Հայոց Հայրապե-
տության գերիշխանությունը վերածվում է մի
հասարակ վաճառայրության, և ժխտվում է
Ամերիկայի Հայոց Հայրապետության մեջ ներս
ու հաջանակությունը, իբր գերազույց իշխա-
նություն Հայաստանյաց Առաքելական եկե-
ղեցու նվիրապետական, վարչական, դրամա-
տիկ հարցերում:

Տիրան սրբազներ թույլ է տվել կարգապահության մի այլ խախտում և—առանց Վեհափառ Հայրապետի համաձայնությունը ստանալու, իրավունք է համարել իրեն մասնակցելու Ծվեդիայի Լուստ քաղաքում գումարված Եկեղեցիների համաշխարհային խորհրդին «Քրիստո մասնավոր խորհրդական», Առողջարար, որ ևս մասնավոր անձն չէ, այլ Հայոց Եկեղեցող Եպիսկոպոս, իսկ Հայ Եկեղեցու մասնակցել-շմասնակցելու իրավունքը վերապահված է ազգի Հայրապետին:

Պետք է ցալով սրտի արձանագրել, որ
վերջերս կարգապահության խախտման այդ-
պիսի մի փաստ տեղի է ունեցել և իրանուն:
Թե՛րանի ի իբեռակոչ քբամական խորհրդի
նախաձեռնությամբ վերջերս հրավիրվել է,
իրանի երեք քեմերի խորհրդակցության՝ քե-
մերը միացենալու և մի ամբողջական քեմ
կազմենու դիտավորությամբ (¹), մի ձեռ-
նարկություն, որ նախ չի բխում մեր եկեղե-
ցական ընդհանուր շահերից և, հավանական
է, արդյունք է օտարի քելագրության և
ապա՝ այդպիսի պատասխանառու ձեռնար-
կը կարող է առաջարվել միայն ազգըն-
տիր Հայրապետի կողմից, որն այժմ ցան-
կանում է բանակցել իրանի կառավարության
հետ սկզբունքային հշանակություն ունեցող
որոշ հարցեր լուծենու համար:

Թեհրանի նոյն ինքնակոչ խորհուրդը,
որ կազմված է բացառապես աշխարհական-
ներից, այնտեղ է առաջացել անկարգապա-
հության մեջ, որ իրավունք է համարել Թեհ-
րանի քահանաներից մեկին բանադրել: Այս
ապօրինի այնպիսին մի գործունեություն է,
որ իր նախընթացը չունի:

ժամանակն է, որ մեր բոլոր եկեղեցական
քեմերն ունենան մի բնականոր ազգային-
եկեղեցական հայրապետականատ կան-
հադրություն, խոսակիրու համար բազմա-
ծեռյաններից: «Ե Սիօնէ ելցեն օրէնք» (Ե-
սայի, Բ 3): Այդ ողբությամբ, Ամենայն Հա-
յոց Հայրապետի անմիջական դեկապարու-
թյամբ, այժմ պատշաճ աշխատանք տար-
վում է:

էջմիածնական թեմերի ամենահիմնական
ու առաջնահիմնական խնդիրն է հավատարիմ
մեալ մեր նախնյաց արյունով սրբագրծ-
ված ավանդներին, պահել ու պահպանել
Հայաստանյաց Առաքելական Եկեղեցու «վի-
ճիրավորությունն ու զերիշխանությունը ար-
տաքին ու ներքին ամեն մի ուսնձգությու-
նից», — ինչպիսի պատգամում է հայրենա-
սեր, մեծագործ Հայրապետ:

Այսօր, մանավանդ արտասահմանյան մեր
թեմերում, հարկ է իր կոչման, պատմական
հշանակության բարձրագույն կետին վրա
պահել Ամենայն Հայոց Հայրապետության
դերն ու հշանակությունը: Էջմիածնի հեղի-
նակության դեմ առնված ամեն մի դիտու-
նավոր քայլ ուղղակի հարված է հայ Ճողո-
վրդի սրտի դեմ, Հայ Եկեղեցու միահա-
րան ունեմ:

Ամենայն Հայոց Հայրապետության նկատ-
մամբ հարկ է լինել պարտանանաշ, ազգիվ,
Եղմարիտ, աչքի լուսի պես պահել ու պահ-
պանել Մայր Արքով ընդհանրական ու նա-
խամեծար իրավագործությունը, բարձրացնել
նրա առաջական դեկապատ դերը բոյոր ազ-
գային-եկեղեցական հարցերը քննելիս, և

անշեղորեն կիրառել էրմիածնի կարգադրությունները, բայ ազգային-եկեղեցական տաճառադրության, և ամեն օր ավելի սերտացնել ու ամրապնդել քեմերի և Մայր Արքունի միջև կապը:

Ամենայն Հայոց Հայրապետությունն իւսող պատմության ընթացքում դեկապարզի է Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու մյուս նվիրապետական Արքուների, քեմերի նկատմամբ, բրիսունեական Եղբայրության և լայնախոնության, սիրո մեծ սկզբունքներով։ Կրոնական բռնապետությունը խորը է եղել էջմիածնի գահակալներին։ «Մի՛ իրեւոփերկ վիճակացն, այլ լինել օրինակ հօտին» (Պետրոս, Ա. Կարոսով., 6 3), «Մի՛ գահասիրութեան և բարձրայօնութեան պատճառը ի ծեզ ունիցէք» (Սարգսի Շնորհալի)։

Որ չափով որ հայ ժողովուրդը իր մասնակցությունն է ունենում Ամենայն Հայոց Կարողիկոսի բնուրության գործում, այդ չափով էլ Ամենայն Հայոց Հայրապետությունը հանդիսանում է մեր Եկեղեցու տերը, ավանդական ամենաբարձր այն հաստատությունը, որից բխում են մեր Եկեղեցու նվիրապետական, դպասնական, վարչական կարգերն ու կանոնները, Եկեղեցու և ժողովրդի իրավունքի սահմանները։

Մայր Արքունի ազգային-եկեղեցական իմաստուն բաղադրական անշեղ կենսագործունակ միայն կարելի է ապահովել ցանկայի միանությունը։ Անա թե ինչո՞ւ այժմ էլ ավելի պետք է ուժեղացնել Մայր Արքունի և նվիրապետական մյուս Արքուների, քեմերի, քեմական խորհուրդների գրական-կենդանի մրասնությունը։

Անա այսպիսի լուրջ խնդիրներ են դրված Ամենայն Հայոց Հայրապետի կողմից մերեմերի առաջ։ Այդ խնդիրների շրջանակները լայն են և դրանք իրական են և այժմնեական, որքան և երատապ։ Այդ խնդիրները շրջափում են Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու ներազան գարզացման, զորացման հենսական հարցերը։

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցում չի եղել և չի կարող լինել երկու գլուխ, երկու դեկապարություն, երկու կարգապահություն։ Մի է և Առաքելական, Ընդհանրական Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին։ Եկեղեցական կարգապահության կոպիա խախտումներ մեծ շարիք են հանդիսանում Եկեղեցու միասնության համար։ Հիմնովին սխալ է և ազգովին վտանգավոր այն միտքը, բայ որի Ամենայն Հայոց Հայրապետությանը վերապահվում է լոկ բարոյական, հոգևոր իրավասություն քեմերի վրա։ Դրանով ժխտվում է Մայր Արքունի ո՛չ միայն պատմական դերն ու նշանակությունը, այլ նաև նրա գոյությունը։

Էջմիածնից՝ Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու դարավոր ու պատմական կենտրոնից, քեկուզ «Փարշական» եղած ամենարույլ փորձերն անգամ բաժանման՝ հակառագրական նոնց զանգվածների համար։

«Այ ազգային Եկեղեցու դարավոր անցյալը ճշմարտապատում վկայում է, որ վաղ թե ուշ անշատվածներին սպասում է դավանագիտության և ազգային գիմագրիման անփառութակ վախճաներ»։

Այս է պատմության դառն փորձը։

«Ու ունիցի ականջ լսելոյ, լուիցէ»։

Այլ կերպ մատողները հայ ժողովրդի ներմին թե արտաքին քշնամիների ջրաղացին առաջ զուր են մատակարարում։

Մեր քեմերը, բայ ազգային-եկեղեցական սահմանադրության, ամենից առաջ, Մայր Արքունի օրինական եերկայացուցիչներն են։ Քեմակալ իշխանությունները ոչ միայն դեկալարներ են տեղական մատենավոր համայնքների, այլև համաձայն Եկեղեցական-կրոնական իրավունքների, օրինական ներկայացուցիչներն են Մայր Արքունի։

Անա այս է լինելու միակ օրինական, արդար և իմաստուն վարժապիծը մեր քեմերի, եթե ուզում ենք կյանքում հաստատուն պահնել ցանկալի ազգային-եկեղեցական միասնությունը։

